ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

« ___» _____ 2012թ. N ___ -Ն

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 356-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, 75-րդ հոդվածՀ 4-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի մարտի 7-ի N 271-Ա որոշումը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի 2012 թվականի բյուջեի մասին» N 356-Ն որոշմամբ հաստատված.

1) Եկամուտների գումարն ավելացնել 1,499,997.5 հազար դրամով,
2) ծախսերի գումարն ավելացնել 1,499,997.5 հազար դրամով,

2. Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի 2012 թվականի բյուջեի մասին» N 356-Ն որոշմամբ հաստատված NN 1, 2, 3, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար NN 1-5 հավելվածների։

3.Երևան քաղաքի 2012 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից առաջին կիսամյակում հատկացնել մինչև 1,001,998.0 հազար դրամ՝

1) մինչև 1,998.0 հազար դրամ՝ Բագրևանդի փողոցին հարող տարածքում գտնվող դամբարանադաշտում հնագիտական ուսումնասիրություններ և պեղումներ իրականացնելու համար՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Մասնագիտական ծառայություններ» հոդվածով,
2) մինչև 1,000,000.0 հազար դրամ՝ «Երևան» հիմնադրամին բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» հոդվածով։

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 356-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 23-ի N 356-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և գումար հատկացնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծով (այսուհետ՝ նախագիծ) նախատեսվում է Երևան քաղաքի 2012 թվականի բյուջեում իրականացնել հետևյալ փոփոխությունները.

- Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի մարտի 7-ի N 271-Ա որոշմամբ համաձայնություն է տրվել Երևան քաղաքի Ծովակալ Իսակովի պողոտայի և Լենինգրադյան փողոցի միջև ավտոճանապարհ կառուցելու ներդրումային ծրագրին, որը նախատեսվում է իրականացնել 2012-2013 թվականներին: Մայրուղու կառուցումը նպատակ ունի թեթևացնել երթևեկության հոսքերը դեպի քաղաքի կենտրոնական հատվածը, որի արդյունքում զգալիորեն կթեթևանա նաև Ծիծեռնակաբերդի խճուղու երթևեկությունը: Ավտոմայրուղու կառուցման արդյունքում նշված տարածքում առաջանում է 5.3 հա ազատ հողամաս, որը ներդրումային հետաքրքրություն է ներկայացնում բնակելի և հասարակական կառուցապատման նպատակներով: Այդ կապակցությամբ ներդրումային ծրագիր է ներկայացրել «Սահակյանշին» ՓԲԸ-ն, որը սեփական ուժերով և միջոցներով իրականացնում է Երևան քաղաքի Ծովակալ Իսակովի պողոտայի և Լենինգրադյան փողոցի միջև 2.6 կմ երկարությամբ ավտոմայրուղու և շուրջ 1.9 կմ ուղետարների կառուցման շինարարությունը, ինչպես նաև վճարում այդ քաղաքաշինական օբյեկտի նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման, տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների արժեքները, որի 50%-ը 2012 թվականի համար կազմում է 1,878,050.0 հազար դրամ, ինչն էլ նախատեսվում է ավելացնել բյուջեի «Ավտոճանապարհ կառուցելու ներդրումային ծրագրին»: Դրա դիմաց Երևանի քաղաքապետարանը ընկերությանն ուղղակի վաճառքի ձևով հատկացնում է նշված ճանապարհին կից առաջացող 5.3 հա մակերեսով հողատարածքը, որի 50% գումարի չափով սույն որոշման նախագծով 1,878,050.0 հազար դրամի չափով ավելացնելով Երևան քաղաքի 2012 թվականի բյուջեի հողի իրացումից մուտքերը:
- Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի մարտի 16-ի «Երևան քաղաքում վերգետնյա անցումներ կառուցելու աշխատանքների դիմաց վճարման սկզբունքին հավանություն տալու մասին» N 404-Ա որոշման հիման վրա Երևանի

քաղաքապետարանի կողմից հավանություն է տրվել Երևան քաղաքում վերգետնյա հետիոտն անցումներ կառուցելու աշխատանքների դիմաց կառուցվող անցումների վրա գովազդային տարածքի տրամադրման վարձավճարի և դրանց երկու կողային մակերեսներին արտաքին գովազդի թույլտվության համար տեղական տուրքի գումարներով հատուցելու ծրագրին: Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն, որ Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպվել է Երևան քաղաքում թվով 7 վերգետնյա հետիոտն անցումների (Արշակունյաց պողոտայում «Սուրմալու» առևտրի կենտրոնի մոտ, Լենինգրադյան փողոցում «Սեբաստիա» մանկապարտեզի հարևանությամբ, Իսակովի պողոտայում հեծանվահրապարակի մոտ, Մյասնիկյան–Աճառյան մայրուղիների հատման մասում, Ազատության պողոտայի Ներսիսյան, Մամիկոնյանց փողոցների խաչմերուկում, Խանջյան–Չայկովսկու փողոցների խաչմերուկում) կառուցման աշխատանքների գնման գործընթացը գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով՝ հատուցումը նախատեսելով Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի մարտի 16-ի N 404-Ա որոշմամբ սահմանված սկզբունքի կիրառմամբ: Հաղթող ճանաչված կազմակերպության առաջարկած գինը թվով 7 վերգետնյա հետիոտն անցումների կառուցման համար կազմում է 499,997.5 հազար դրամ, իսկ հեղինակային և տեխնիկական հսկողության ծառայությունների արժեքները կազմում են համապատասխանաբար 9,563.1 և 3,000.0 հազարական դրամ, որը հանրագումարով՝ 512,563.6 հազար դրամով նախատեսվում է ավելացնել Երևան քաղաքի 2012 թվականի բյուջեի «Հետիոտն անցումների կառուցում և վերանորոգում» ծրագրով:

Նշված թվով 7 և գոյություն ունեցող թվով 3 վերգետնյա հետիոտն անցումների կողային ճակատներին գովազդային մակերեսներից և առանձնացված տեղադիրների միջոցով 120 քմ գովազդային մակերեսից գանձվող արտաքին գովազդի թույլտվության տեղական տուրքը ամսական կազմում է 1,463.0 հազար դրամ կամ ընդհանուր արժեքով 263,340.0 հազար դրամ 180 ամսվա համար, իսկ 236,657.5 հազար դրամը վերգետնյա հետիոտն անցումների և նշված տարածքների վարձակալության տրամադրման դիմաց վճարներն են, որը Երևանի քաղաքապետարանը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված «Բաց ընդ Բաղ» ՍՊԸ –ն 30.03.2012թ. N ԵՔ-ԲԸՀԱՇՁԲ-12/2 պայմանագրի գնից ելնելով 180 ամսվա կտրվածքով հատուցում է վերջինիս կողմից կառուցվող թվով 7 վերգետնյա հետիոտն անցումների կառուցման համար: Նշված գումարները ձևակերպվում են որպես կանխավճարներ՝ արտաքին գովազդի թույլտվության տեղական տուրքի և նշված տարածքների վարձակալության գծով: Սույն որոշման նախագծով

նախատեսվում է նաև Երևան քաղաքի 2012 թվականի բյուջեի եկամտային մասում «Համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու տուրքը» ավելացնել՝ 263,340.0 հազար դրամով, իսկ «Այլ գույքի վարձակալությունից մուտքերը»՝ 236,657.5 հազար դրամով։

- Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի փետրվարի 14-ի «Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 23-ի N 356-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N394-Ն որոշումով հաստատվել էր Ուլնեցու փողոցը Ռուբինյանց փողոցին կապող ճանապարհի կառուցման շինարարական աշխատանքների համար 552,000.0 հազար դրամ, իսկ նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձագիտական եզրակացության տրամադրման համար 8,000.0 հազար դրամ։ Սակայն ելնելով բնապահպանական և արտագերատեսչական փորձաքննության անհրաժեշտությունից՝ առաջարկվում է Երևան քաղաքի 2012 թվականի բյուջեում կատարել հոդվածային փոփոխություն, որի համաձայն նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձագիտական եզրակացության տրամադրման համար անհրաժեշտ կլինի 15,000.0 հազար դրամ, որից՝ 12,500.0 հազար դրամը նախագծային աշխատանքների, 1,500.0 հազար դրամը նախագծանախահաշվային փաստաթղթերի բնապահպանական փորձաքննության և 1,000.0 հազար դրամը արտագերատեսչական փորձաքննության համար, ինչն էլ հաշվի առնելով առաջարկվում է նախագծահետազոտական ծախսերին ավելացնել 7,000.0 հազար դրամ, նույնքան չափով նվազեցնելով շինարարական աշխատանքների համար նախատեսված միջոցները։

- Երևան քաղաքի Բագրևանդի փողոցին հարող տարածքում գտնվող համայնքային սեփականություն համարվող հողամասերը օտարելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել տարածքում առկա դամբարանադաշտում հնագիտական ուսումնասիրություններ և պեղումներ իրականացնել, որից հետո հնարավոր կլինի հողամասերի օտարման համար կազմակերպել հրապարակային աճուրդներ։ Հաշվի առնելով վերոգրյալը հնագիտական ուսումնասիրությունների համար անհրաժեշտ 1,998.0 հազար դրամ նախահաշվային գումարը նախատեսվում է հատկացնել սույն որոշման նախագծով, որի շրջանակներում ձեռք կբերվեն պեղումներ իրականացնելու մասնագիտական ծառայությունները։ Ելնելով վերոգրյալից առաջարկվում է Երևան քաղաքի 2012 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից հատկացնել 1,998.0 հազար դրամ։

- Հաշվի առնելով Երևան քաղաքում 2012 թվականի ձմռան ամիսներին առատ ձյան հետևանքով ասֆալտ–բետոնյա ծածկի մասսայական քայքայված վիճակը, ինչպես նաև այն հանգամանքը, որ վերջին 10 տարիների ընթացքում մայարքաղաքի կենտրոնական փողոցների ասֆալտ–բետոնյա ծածկը կապիտալ հիմնանորոգման չի ենթարկվել, սույն որոշման նախագծով նախատեսվում է հատկացնել 4,611,395.9 հազար դրամ՝ Երևան քաղաքի մի շարք կենտրոնական փողոցներում ասֆալտ–բետոնյա ծածկի հիմնանորոգման աշխատանքներ իրականացնելու նպատակով: Նշված աշխատանքները ներառում են նաև դիտահորերի փոխարինում ու կարգաբերում, փողոցների երկու կողմերում եզրաքարերի հիմնովին փոխարինում: Նշված ծախսային ավելացումը նախատեսվում է իրականացնել հողերի օտարումից մուտքերի նույնքան՝ 4,611,395.9 հազար դրամ ավելացման հաշվին:
- Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2012 թվականի ապրիլի 5-ի թիվ 380-Ն որոշումը Երևանի քաղաքապետարանի և ՀՀ տարածքային կառավարման նախարարության միջև կնքվել է 05.04.12թ. N ԿՏՖ Պ-1 պայմանագիրը Երևան քաղաքում ջերմատների կառուցման և զարգացման ներդրումային ծրագրի նախապատրաստական աշխատանքների կազմակերպման նպատակով Երևանի քաղաքապետարանին որպես դրամաշնորհ 1,000,000.0 հազար դրամ հատկացնելու մասին: êույն որոշման նախագծով նախատեսվում է Երևան քաղաքի 2012 թվականի բյուջեի եկամտային մասի «Այլ դոտացիաներ» եկամտատեսակին ավելացնել 1,000,000.0 հազար դրամ, որն էլ պահուստային ֆոնդի վարչական մասից հատկացնել որպես նվիրատվություն «Երևան» հիմնադրամին՝ ներդրումային ծրագրի նախապատրաստական աշխատանքներն իրականացնելու նպատակով:

Ելնելով վերոգրյալից Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 23-ի N 356-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և գումար հատկացնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ N 1

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 356-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 23-ի N 356-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և գումար հատկացնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ N 2

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 356-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 23-ի N 356-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և գումար հատկացնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման արդյունքում Երևանի քաղաքի 2012 թվականի բյուջեի եկամուտները և ծախսերը ավելանում են համապատասխանաբար 1,499,997.5 հազար դրամով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված N 1
Երևան քաղաքի ավագանու
2012 թվականի_____-ի
N _____ – Ն որոշման

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 356-Ն ՈՐՈՇՄԱՆ N 1 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամներով)

Տողի NN	Եկամտատեսակները	Հոդվածի NN	Ընդամենը	*այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)*	
				վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6
1000	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ		**1,499,997.5**	**1,499,997.5**	**-**
	այդ թվում[a]				
1100	**1. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ**	**7100**	**263,340.0**	**263,340.0**	**-**
	այդ թվում՝				
1130	**1.3 Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ**	**7145**	**263,340.0**	**263,340.0**	**-**
	այդ թվում՝				
1131	Տեղական տուրքեր	71452	**263,340.0**	**263,340.0**	**-**
	այդ թվում՝				
1142	թ) Համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար		263,340.0	263,340.0	-
1200	**2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ**	**7300**	**1,000,000.0**	**1,000,000.0**	**-**
	այդ թվում՝				
1250	**2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից**	**7331**	**1,000,000.0**	**1,000,000.0**	**-**
	որից՝				
1254	բ) Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ		1,000,000.0	1,000,000.0	-
	այդ թվում՝				
1256	բբ) այլ դոտացիաներ		1,000,000.0	1,000,000.0	-
1300	**3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ**	**7400**	**236,657.5**	**236,657.5**	**-**
	այդ թվում՝				
1330	**3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ**	**7415**	**236,657.5**	**236,657.5**	**-**
	այդ թվում՝				
1334	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր		236,657.5	236,657.5	-

Հավելված N 2
Երևան քաղաքի ավագանու
2012 թվականի_____-ի
N _____ – Ն որոշման

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 356-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամներով)

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Ընդամենը	այդ թվում (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
						վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8
				ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	**1,499,997.5**	**1,000,000.0**	**499,997.5**
2400	**04**	**0**	**0**	**ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**	**512,560.6**	**-**	**512,560.6**
				այդ թվում՝			
2450	**04**	**5**	**0**	***Տրանսպորտ***	**7,002,006.5**	**-**	**7,002,006.5**
				որից՝			
2451	04	5	1	ճանապարհային տրանսպորտ	7,002,006.5	-	7,002,006.5
2490	**04**	**9**	**0**	***Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)***	**(6,489,445.9)**	**-**	**(6,489,445.9)**
				որից՝			
2491	04	9	1	Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)	(6,489,445.9)	-	(6,489,445.9)
3100	**11**	**0**	**0**	**ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ**	**987,436.9**	**1,000,000.0**	**(12,563.1)**
				այդ թվում՝			
3110	11	1	0	***ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ***	**987,436.9**	**1,000,000.0**	**(12,563.1)**
				որից՝			
3112	11	1	2	ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ	987,436.9	1,000,000.0	(12,563.1)

Հավելված N 3
Երևան քաղաքի ավագանու
2012 թվականի_____-ի
N _____ – Ն որոշման

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 356-Ն ՈՐՈՇՄԱՆ N 3 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամներով)

Տողի NN	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	NN	Ընդամենը	այդ թվում (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
				վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6
4000	**ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ**		**1,499,997.5**	**1,000,000.0**	**499,997.5**
	այդ թվում՝				
4050	**Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ[a]**	x	**987,436.9**	**1,000,000.0**	**(12,563.1)**
	այդ թվում՝				
4700	***1.7 ԱՅԼ ԾԱԽՍԵՐ***	x	**987,436.9**	**1,000,000.0**	**(12,563.1)**
	այդ թվում՝				
4770	***ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ***	x	**987,436.9**	**1,000,000.0**	**(12,563.1)**
	որից՝				
4771	-Պահուստային միջոցներ	4891	987,436.9	1,000,000.0	(12,563.1)
5000	**Բ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ**	x	**7,002,006.5**	**-**	**7,002,006.5**
	այդ թվում՝				
5100	**1.1. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ**	x	**7,002,006.5**	**-**	**7,002,006.5**
	այդ թվում՝				
5110	***ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ***	x	6,948,906.5	-	6,948,906.5
	որից՝				
5112	- Շենքերի և շինությունների կառուցում	5112	2,337,510.6	-	2,337,510.6
5113	- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	4,611,395.9	-	4,611,395.9
5130	***ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ***	x	53,100.0	-	53,100.0
	որից՝				
5134	- Նախագծահետազոտական ծախսեր	5134	53,100.0	-	53,100.0
6000	**Գ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ**	x	**(6,489,445.9)**	**-**	**(6,489,445.9)**
	այդ թվում՝				
6400	**ՉԱՐՏԱԴՐՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ՝**	x	(6,489,445.9)	-	(6,489,445.9)
	այդ թվում՝				
6410	*ՀՈՂԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ*	8411	(6,489,445.9)	-	(6,489,445.9)

Հավելված N 4
Երևան քաղաքի ավագանու
2012 թվականի_____-ի
N _____ – Ն որոշման

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 356-Ն ՈՐՈՇՄԱՆ N 6 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամներով)

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հոդված NN	Ընդամենը	*այդ թվում (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)*	
							վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9
				ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ		**1,499,997.5**	**1,000,000.0**	**499,997.5**
2400	**04**	**0**	**0**	ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		**512,560.6**	**-**	**512,560.6**
				այդ թվում՝				
2450	**04**	**5**	**0**	***Տրանսպորտ***		**7,002,006.5**	**-**	**7,002,006.5**
				որից՝				
2451	04	5	1	Ճանապարհային տրանսպորտ		7,002,006.5	-	7,002,006.5
				այդ թվում՝				
				5. Հետիոտն անցումների կառուցում և վերանորոգում		***512,560.6***	**-**	***512,560.6***
				- Շենքերի և շինությունների կառուցում	5112	512,560.6	-	512,560.6
				8. Մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում		***4,611,395.9***	**-**	***4,611,395.9***
				- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	4,611,395.9	-	4,611,395.9
				12. Ավտոճանապարհ կառուցելու ներդրումային ծրագիր		***1,878,050.0***	**-**	***1,878,050.0***
				- Շենքերի և շինությունների կառուցում	5112	1,824,950.0	-	1,824,950.0
				- Նախագծահետազոտական ծախսեր	5134	53,100.0	-	53,100.0
2490	**04**	**9**	**0**	***Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)***		**(6,489,445.9)**	**-**	**(6,489,445.9)**
				որից՝				
2491	04	9	1	Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)		(6,489,445.9)	-	(6,489,445.9)
				այդ թվում՝				
				5. Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր		***(6,489,445.9)***	**-**	***(6,489,445.9)***
				-Հողի իրացումից մուտքեր	8411	(6,489,445.9)	-	(6,489,445.9)
3100	**11**	**0**	**0**	ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ		**987,436.9**	**1,000,000.0**	**(12,563.1)**
				այդ թվում՝				

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հոդված NN	Ընդամենը	*այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)*	
							վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9
3110	11	1	0	***ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ***		**987,436.9**	**1,000,000.0**	**(12,563.1)**
				որից՝				
3112	11	1	2	ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ		987,436.9	1,000,000.0	(12,563.1)
				այդ թվում՝				
				–Պահուստային միջոցներ	4891	987,436.9	1,000,000.0	(12,563.1)

Հավելված N 5
Երևան քաղաքի ավագանու
2012 թվականի_____-ի
N _____ – Ն որոշման

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 356-Ն ՈՐՈՇՄԱՆ N 7 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1
ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամներով)

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հոդված NN	Ընդամենը	այդ թվում (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
							վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9
				ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ		**1,499,997.5**	**1,000,000.0**	**499,997.5**
2400	**04**	**0**	**0**	**ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**		**512,560.6**	**-**	**512,560.6**
				այդ թվում՝				
2450	**04**	**5**	**0**	***Տրանսպորտ***		**7,002,006.5**	**-**	**7,002,006.5**
				որից՝				
2451	04	5	1	ճանապարհային տրանսպորտ		7,002,006.5	-	7,002,006.5
				այդ թվում՝				
				5. Հետիոտն անցումների կառուցում և վերանորոգում		***512,560.6***	**-**	***512,560.6***
				- Շենքերի և շինությունների կառուցում	5112	512,560.6	-	512,560.6
				8. Մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում		***4,611,395.9***	**-**	***4,611,395.9***
				- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	4,611,395.9	-	4,611,395.9
				12. Ավտոճանապարհ կառուցելու ներդրումային ծրագիր		***1,878,050.0***	**-**	***1,878,050.0***
				- Շենքերի և շինությունների կառուցում	5112	1,824,950.0	-	1,824,950.0
				- Նախագծահետազոտական ծախսեր	5134	53,100.0	-	53,100.0
2490	**04**	**9**	**0**	***Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)***		**(6,489,445.9)**	**-**	**(6,489,445.9)**
				որից՝				
2491	04	9	1	Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)		(6,489,445.9)	-	(6,489,445.9)
				այդ թվում՝				
				5. Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր		***(6,489,445.9)***	**-**	***(6,489,445.9)***
				-Հողի իրացումից մուտքեր	8411	(6,489,445.9)	-	(6,489,445.9)
3100	**11**	**0**	**0**	**ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ**		**987,436.9**	**1,000,000.0**	**(12,563.1)**
				այդ թվում՝				

Տող NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հոդված NN	Ընդամենը	*այդ թվում (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)*	
							վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9
3110	11	1	0	***ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ***		**987,436.9**	**1,000,000.0**	**(12,563.1)**
				որից՝				
3112	11	1	2	ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ		987,436.9	1,000,000.0	(12,563.1)
				այդ թվում՝				
				–Պահուստային միջոցներ	4891	987,436.9	1,000,000.0	(12,563.1)